

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20

«Նորավանք» գիտակրթական  
հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի 2006թ. փետրվարի 8-ի նիստի

- Ա.Մարգարյան - ՀՀ վարչապետ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
- Մ. Թովուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար«  
«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի անդամ
- Լ.Մկրտչյան - ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Նորավանք» գիտա-  
կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Կ.Կիրակոսյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի  
կառավարման վարչության պետ, «Նորավանք»  
գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի  
անդամ
- Ա.Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ, «Նորա-  
վանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի անդամ
- Գ.Գազյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի  
տեղակալ
- Գ.Հարությունյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր  
տնօրեն
- Ս.Սեյրանյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի  
խորհրդական
- Ռ.Սաֆրաստյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «Հասարա-  
կագիտական հետազոտությունների» ծրագրի թեմայի  
ղեկավար

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2005թ.  
գործունեության հաշվետվության և 2006թ. գործունեության  
ծրագրերի մասին

-----  
----- (Գ.Հարությունյան, Լ.Մկրտչյան« Կ.Կիրակոսյան,  
Ա.Ավետիսյան, Գ.Գազյան, Ս.Սեյրանյան, Ռ.Սաֆրաստյան» Մ.  
Թովուզյան» Ա.Մարգարյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի՝  
ա) 2005 թվականի հաշվետվությունը (կցվում է),  
բ) 2006 թվականին իրականացման ենթակա ծրագրերը:
2. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրեն Գ.Հարությունյանին՝

2.1 2006 թվականին իրականացվող հասարակագիտական ծրագրերի շրջանակներում`

- ա) առավել մեծ ուշադրություն դարձնել Պետություն-Եկեղեցի հարաբերությունների ուսումնասիրությանը, պետության և եկեղեցու ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ պետության և եկեղեցու միջև առկա հիմնախնդիրների շուրջ,
- բ) առաջնահերթ կարգով իրականացնել կիրառական հայագիտական ուսումնասիրություններ և 2006թ. մարտին «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում կազմակերպել քննարկումներ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների և հիմնադրամի աշխատակազմի մասնակցությամբ` կիրառական հայագիտության ուղղությամբ կատարված և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:  
Կիրառական հայագիտության ուղղությամբ կատարվող հետազոտությունների վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ գետեղել զանգվածային լրատվամիջոցներում:

2.2 2006թ. իրականացվող քաղաքական հետազոտությունների շրջանակներում առաջնահերթ կարգով իրականացնել`

- ա) ԼՂՀ հիմնախնդիրների կարգավորման վերաբերյալ տեղեկատվության հավաքում և վերլուծություն»
- բ) Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության և ՀՀ էներգետիկ անվտանգության հետ կապված ուսումնասիրություններ և վերլուծություններ:

3. ՀՀ քաղաքաշինության նախարար պարոն Ա.Հարությունյանին`

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի սեփականություն հանդիսացող` Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղի տարածքում նախատեսվող գիտաժողովներ անցկացնելու մասնաշենքի նախագծային-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն ընդգրկել Հայաստանի Հանրապետության 2006թ. պետական բյուջեով նախագծային աշխատանքների համար նախատեսված ծախսերի ցանկում:

«Նորավանք» գիտակրթական  
հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի նախագահ  
ՀՀ վարչապետ

Ա. Մարգարյան